ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 32/1 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՄԵԼԱՆՅԱ ՍԱՄՎԵԼԻ ԽՈՅԵՑՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0501-0019 կադաստրային ծածկագրով 0,00204 հեկտար մակերեսով հողամասը Սպիտակի քաղաքապետի 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ 28 որոշմամբ ավտոտնակ կառուցելու նպատակով վարձակալությամբ, 15 տարի ժամկետով հատկացվել է Ժորա Սողոմոնի Պողոսյանին, ով 2008 թվականին կառուցել է 14,78 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակ: Հաշվի առնելով, որ Ժորա Սողոմի Պողոսյանի մահից հետո 2013 թվականի փետրվարի 19-ի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում թիվ 369) ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքը ժառանգել են նրա կինը՝ Մելանյա Սամվելի Խոյեցյանը և որդին՝ Արայիկ Ժորայի Պողոսյանը, որը ստացել է պետական գրանցում՝ 2017 թվականի օգոստոսի 23-ին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23082017-06-0016 վկայական), կառուցապատման իրավունքի ժամկետն ավարտվել է 2022 թվականի փետրվարի 22-ին, հիմք ընդունելով Մելանյա Սամվելի Խոյեցյանի 2022 թվականի մայիսի 5-ի դիմումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062024-06-0080 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062024-06-0080 վկայականը), «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան փողոց 32/1 ավտոտնակ» հասցեում գտնվող 06-006-0501-0019 կադաստրային ծածկագրով 0,00204 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա գտնվող 14,78 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրել Մելանյա Սամվելի Խոյեցյանին:

2. Վարձավճարի չափ սահմանել տարեկան 7000 ՀՀ դրամ: